24 SEP 2010

ՊԵՏՊ. ԳՐԱԴԱՐԱՆ Հ.Ս.Ս.Հ.
Ինվ. 1255

372.1

ԲԱՄԲԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ I ԱՍՏ. ԴՊՐ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ռուս. թարգմանեց
Ա.Հ. Աբանասյան

633.5
Բ-25

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1931

Уполн. главлита № В-4810 Заказ № 1928а Тираж 8.000
Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

Բ-25

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1.

Վերցրեք բամբակի մի կնգուղ, հանեք նրա միջից բամբակի մազով պատած մի սերմ։ Հարթեցեք մազը ահա այսպես. սերմը բռնեք ձախ ձեռքում, նրա ցուցամատով և բութ մատով, իսկ աջ ձեռքում ունենալով կարդոժապավենը — մետաղյա խողանակը, զգուշ նրանով սանրեցեք բամբակի մազը կենդրոնից դեպի յեզրները։ Սերմը աստիճանաբար շուռ տվեք։ Այդպիսով դուք կստանաք բամբակի մազից մի շրջանակ, վորի կենտրոնում կլինի սերմը։ Այս շրջանակը սոսընձով կամ գումմիով կպցրեք գունավոր թղթի վրա, սոսնձելով միայն սերմը և վոչ թե մազը։

(Առաջադրությունը կատարում է ամեն մի աշակերտ)։

№ 1 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Բամբակի կնգուղ։
2. Մետաղյա խողանակ։
3. Գունավոր թուղթ։
4. Սոսինձ կամ գումմի։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2.

Հանեք կնգուղի միջից բամբակի սերմը, մաքրեք նրա վրայի բամբակի մազը։ Դրա համար ավելի լավ է մետաղյա խողանակով մաքրել այնքան, վոր սերմը մերկացվի։ Դիտեք սերմը և ապա դրեք արկղիկի կամ ապակյա սրվակի մեջ, վորպես ապագա ժողովածուի նյութ։

28 FEB 2013

(Առաջադրությունը կատարում է ամեն մի աշակերտ)։

№ 1 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. *Բամբակի կնդուղ։*
2. *Մետաղյա խոզանակ։*
3. *Արկղիկ կամ ապակյա սրվակ։*

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 3.

Հանեք բամբակի կնդուղից բամբակի մի քանի մազ, դրեք մազը ապակու վրա և նայեք խոշորացույցով կամ մանրադիտակով։ Խոշորացույցով լավ յերևալու համար դրեք ապակին դունավոր թղթի վրա կամ թե ուղղակի սեղանի վրա, յեթե սեղանը ներկած է սև գույնով։

(Առաջադրությունը կատարում է ամեն մի աշակերտ)։

№ 3 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. *Բամբակի կնդուղ կամ մազավոր սերմ։*
2. *Ապակի 3×6 սանտիմ. մեծության։*
3. *Դունավոր թուղթ։*
4. *Խոշորացույց 10 — 15 անգամ մեծացնող։*
5. *Մանրադիտակ։*

ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZSUR-ՀՍՍՌ
43180-63

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 4.

Ուսուցչից ստացած բամբակը բաժանեցեք ձեր ողակի բոլոր անդամների մեջ՝ հավասարապես, մաքրեք բամբակի վրա և նրա մեջը գտնվող աղբից, տերևներից և այլն. հետո մետաղյա խոզանակով նրան հարթեցրեք այնպես, ինչպես այդ անում եյիք առաջին առաջադրությունը կատարելիս։ Հարթած բամբակը իրար կողքի դնելով շինեք ժապավենի նման, ինչպես վոր այդ տեսնում եք ձեզ տված № 1 ժողովածուի մեջ։

(Առաջադրությունը կատարում է ամեն մի աշակերտ)։

№ 4 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. *Բամբակ։*
2. *Մետաղյա խոզանակ։*
3. *Բամբակե-ժապավեն № 1 ժողովածուի։*

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 5.

Վերցրեք ձեզ տված № 1- բամբակի ժապավենը, նրան մասնատեք այնքան մասերի, ինչքան վոր անդամ ունի ձեր ողակը, հետո սկսեք բամբակը վոլորել աստիճանաբար ձգելով նրան, մինչև վոր նա նման կլինի № 2 բամբակի հաստաթելին։ (Առաջադրությունը կատարում է ամեն մի աշակերտ)։

№ 5 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. *Բամբակի ժապավեն № 1.*
2. *Մկրատ։*
3. *Բամբակե հաստաթել № 2.*

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 6.

Վերցրեք ձեզ տված № 2 հաստաթելը, կտրատեք այնքան մասերի, որքան մարդ կա ձեր ողակում, վոլորեք նրան ամրիճանաբար ձգելով այնքան, որ նա բամբակ № 3 թելի հաստության լինի։

(Առաջադրությունը կատարում է ամեն մի աշակերտ)։

№ 6. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. № 2 հաստաթել։
2. Մկրատ։
3. Բամբակի № 3 թել։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 7.

Վերցրեք № 3 բամբակաթելը և նրան ձգեք ու վոլորեք այնպես, ինչպես այդ արեցիք № 6 առաջադրության ժամանակ։ Ստացած վոլորած բամբակաթելերից այժմ կստանաք № 4 միջնաթել — հիմք։

(Առաջադրությունը կատարում է ամեն մի աշակերտ)։

№ 7 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. Բամբակաթել № 3։
2. Մկրատ։
3. Միջնաթել № 4։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 8.

Վերցրեք թել № 6. և վարվեք նույնպես, ինչպես № 3-ի հետ, մինչև վոր նրանից վոլորելով ստանաք թելի բարակ մանվածք, իսկ դրա համար պետք է № 4 թելը ուժեղ ձգեք և մանեք։

(Առաջադրությունը կատարում է ամեն մի աշակերտ)։

№ 8. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

Բամբակի ժապավեն № 4
2. Մկրատ։
3. Սպիտակ մանվածք։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 9.

Վորոշեք ուսուցչից ստացած մանվածքի ամրությունը։ Այդ անելու համար նախ գուսալինի արկըղիկի խուփից կշռի մի թաթ շինեք։ Թաթը պետք է կշռել և նրա քաշը տետրում գրել։ Հետո թաթին պետք է կապել մանվածքի մի ծայրը, իսկ մյուսն ամրացնել հորիզոնական լծակին — շատիվին։ Կշռաթաթի մեջ դնելով մանր քարեր կամ կշռաքարեր, վորը հետո կշռելու յեք նրա քաշն իմանալու համար, հեռաւեցեք վոր թաթը չվոլորվի։ Դնում եք այնքան քարեր, մինչև վոր մանվածքի թելը կտրվում է։ Դրանից հետո իմացեք ինչ քաշով քար եք դրել թա-

թի վրա. դրան ավելացրեք թաթի քաշը, վոր գրի եյիք անցրել տետրում, և դրանց յերկուսի գումարից կիմանաք մանվածքի ամրությունը։ (Առաջադրությունը կատարում է ամեն մի ողակ)։

№ 9 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. Սպիտակ մանվածաթել։
2. Դեղատան կշռի կամ գուտալինի արկղիկի խուփից շինած կշեռք։
3. Կշռաքար, կամ մանր քարեր։
4. Կշեռք իր քարերով։
5. Մկրատ։
6. Շտատիվ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 10.

Վերցրեք մանվածաթելը. այրեք նրան սպիրտի լամպի վրա կամ լուծկիյով, մոմով և դիտեցեք, թե ինչպես է նա այրվում և ինչ է մնում նրանից հետո։ Հետո վերցրեք բրդի մանվածաթել. սա նույնպես այրեք։ Դիտեք՝ ինչպես է սա այրվում։ Տետրում նշանակեցեք ձեր դիտողությունները — բամբակի թելի և բրդի թելի այրման տարբերությունն իրարից։

№ 10 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. Բամբակե սպիտակ մանվածաթել։
2. Բրդե մանվածաթել։
3. Սպիրտի լամպ կամ մոմ։
4. Գրելու տետր։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ № 11.

Աշխատանքի դասերի ժամերին շինած շերջանակի վրա — դիմացի կողմերից քաշեք սպիտակ բամբակաթելի 50 շարք (հիմք)՝ ըստ հնարավորության իրարու մոտ-մոտ։ Հետո ձեր շինած ասպի վրա փաթաթեք սև կամ կարմիր գույնի բամբակաթել և դրանով հյուսեք հիմքի թելը։ Դա անվում է այսպես. ամրացրեք ասպի վրա փաթաթած թելի ծայրը շրջանակի վերջից, հետո ասպով բարձրացրեք հիմքի առաջին թելը, բաց թողեք յերկրորդը, տարեք ասպը յերրորդ թելի տակով, բաց թողեք չորրորդը, տարեք հինգերորդի տակով, բաց թողեք վեցերորդը. և այսպես, մինչև 35—40-րդ շարքը։ Հասնելով սրան, շուռ տվեք ասպը և այժմ հյուսեք յերկրորդ շարքը նույն կերպ, սակայն այնպես, վոր հիմա ասպի թելերն անցնեն առաջին շարքի բաց թողնված թելերի վրայով։ Այսպես հյուսելով շարքե շարք թելերը մոտեցրեք իրար սանրով կամ մի փայտիկով, վորպեսզի ստացվի հյուսվածքի մի կտոր։ Սա կոչվում է կտավի հյուսվածք։ Նկարեցեք ձեր տետրակի մեջ, թե ինչպես են հյուսվում թելերը։ Հետո արեք հետևյալ աշխատանքը։ Կտրեք հիմքի վրա հյուսած թելերը։ Ամրացրեք ասպի թելը ձեր հյուսածից քիչ հեռու շրջանակի վրա և այժմ հյուսելը սկսեք այսպես. ասպը տարեք առաջին թելի տակ, հետո թողեք յերկրորդը, տարեք յերրորդը և չորրորդը թելերի տակ, թողեք հինգերորդը. տարեք 6 և 7-րդ թելերի

տակ, թողեք 8-ը, տարեք 9 և 10-ի տակ, և այսպես շարունակեցեք մինչև վերջը։ Հասնելով վերջին շուռ տվեք և նույնն արեք, միայն այսպես. այժմ անցրեք ասպը յերկրորդ և յերրորդ թելերից, թողեք չորրորդը, անցրեք հինգերորդ և վեցերորդի տակից մինչև վերջ. հասնելով ծայրին, թելը շուռ տվեք և հյուսեք առաջին շարքի պես — այն է անցրեք առաջին և յերկրորդի տակից, բաց թողեք յերրորդը, անցրեք 4 և 5-ի տակից, անցրեք 6-որդը և այլն։ Տեսեք՝ ինչ է ստացվում։ Այս յեղանակի հյուսվածքը կոչվում է սարժի հյուսվածք։ Այս հյուսվածքը նույնպես նկարեցեք ձեր տետրի մեջ։ Հիմա մի ուրիշը։ Թողեք հիմքից վորոշ տարածություն, ամրացրեք ասպի թելը շրջանակին, թողեք հիմքի առաջին թելը և անցրեք 2,3,4 և 5-ը թելերի տակով, թողեք 6-ը, անցրեք 7,8,9 և 10-ի տակից, թողեք 11-յերորդը, անցրեք 12, 13, 14, և 15-յերորդի տակից, և այսպես մինչև ծայրը։ Այս հյուսվածքը կոչվում է սատինի հյուսվածք։ Սա ևս նկարեք ձեր տետրի մեջ։ Շրջանակի վրա հյուսածը պահպանեցեք ժողովածուի համար։ (Առաջադրությունը կատարում է ամբողջ ողակը)։

№ 11. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. Սպիտակ մանվածքի թել։
2. Դունավոր կամ սև մանվածքի թել։
3. Աշակերտների ձեռքով շինած շրջանակ։
4. Ասպ։
5. Մկրատ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 12.

Վերցրեք ուսուցչի ձեզ տված միկալի կտորը և խոշորացույցի տակ ուշադրությամբ դիտեցեք՝ ինչպես են հյուսված թելերը։ Վորպեսզի ավելի պարզ լինի, ասեղով կամ գնդասեղով դուրս քաշեք հիմքի մի քանի թելեր և դիտեցեք, թե ինչպես են գնում թելերը։ Նկարեք տետրում թելերի հյուսվածքը և համեմատեցեք, թե ձեր հյուսվածքներից վորին է նման։ Վերցրեք մի կտոր սարժ, բաժանեք ձեր ողակի անդամների մեջ, ուշադրությամբ գննեք խոշորացույցի տակ և արտանկարեք տետրի մեջ։ Վերցրեք մի կտոր սատին, բաժանեք այն ձեր ողակի անդամների մեջ, ապա ասեղով կամ գնդասեղով մի ծայրից քաշեք հիմքի մի քանի թելեր և ուշադրությամբ դիտեք խոշորացույցի տակ։ Շրջանակի ձեր գործած հյուսվածքներից տեսեք վորին է սա նման։ Նկարեք ձեր տետրում և համեմատեցեք նախորդ նկարի հետ։ Միակալի, սարժի և սատինի մի-մի կտոր պահեք ձեր ժողովածուի համար։

(Առաջադրությունը կատարելու յեն բոլոր աշակերտները)։

№ 12 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. Միակալի մի կտոր։
2. Սարժի » »
3. Սատինի » »
4. Խոշորացույց 10 × 15 անդամ մեծացնող։
5. Ասեղ կամ գնդասեղ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 13.

Վերցրեք ուսուցչից բաժակով լուծույթը և կոպիտ ու սպիտակ հյուսվածքի յերկու կտոր. դրեք կտորները բաժակի մեջ, հետո դնելով սպիրտի վառաբաժակի մաղի վրա, 30 բոպե տաքացրեք։

Յեթե բաժակի միջի լուծույթը յեփ գալուց պակասի, կիսով չափ առեք ուսուցչից տաք ջուր և զգույշ լցրեք կիսատ բաժակը։ Ապակյա ձողիկով յերբեմն շուռ-մուռ տվեք կտորը. կես ժամ անց, սպիրտի վառաբաժակը հանգցրեք, թողեք վոր բաժակը սառչի և հետո կտորները հանեք բաժակի միջից, լվացեք մաքուր սառը ջրում և փռեք վոր չորանա։

(Առաջադրությունը կատարում է վողջ ողակը։)։

№ 13 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. Բաժակ 100—150 խոր. սանտիմետր ծավալով։
2. Սպիրտի լամպ։
3. Ազբեստի մաղ։
4. Ապակյա ձողիկ։
5. Նատրի լուծույթ։
6. Տաք ջուր։
7. Կտորը թրջելու աման։
8. Կոպիտ միտկալի կտոր։
9. Սպիտակ միտկալի կտոր։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 14.

Վերցրեք ուսուցչից ներկով լի բաժակը, գցեք նրա մեջ լվացած ամեն մի կտորի կեսը։ Դրեք բաժակը սպիրտի լամպի մաղի վրա և տաքացրեք 15 բոպե։ Կտորը բաժակում ապակյա ձողիկով անդադար շուռ ու մուռ տվեք։ 15 բոպե անց, հանեք կտորը, գցեք բաժակի մեջ 2 գրամ սովորական աղ, խառնեք ձողիկով, մեջը դրեք կտորը և տաքացրեք ներկաջուրն այնքան, վոր նա յեռ գա. ներկեք դարձյալ կես ժամ, վորից հետո դրեք մի կողմ վոր սառչի. հանեք միջից կտորը, սառը մաքուր ջրի մեջ լվացեք, չորացրեք և պահեք ժողովածուի համար։

(Առաջադրությունը կատարում է վողջ ողակը)։

№ 14 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. Բաժակ 150 խոր. սանտիմ. ծավալով։
2. Սպիրտի լամպա։
3. Ազբեստի մաղ։
4. Նրա պատվանդանը։
5. Ներկ։
6. Սովորական աղ։
7. Ապակյա ձողիկ։
8. Լվալու աման։
9. Չափաբաժակ և մենզուրկա։
10. $1\frac{1}{2}$ լիտրանոց շիշ կամ աման։
11. Մի կտոր լվացած միտկալ։
12. Մի կտոր սպիտակացրած միտկալ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 15.

Վերցրեք ուսուցչից մի կտոր լենոլեյում, որի վրա դուք գծել եյիք նկարը, պատրաստած ներկը տարածեցեք կտորի վրա հավասար շերտով։

Վերցրեք մի կտոր այն սպիտակից, որ դուք լվացել եյիք և մի կտոր ներկած կտորից։ դրեք մի շորի կամ փափուկ թղթի վրա, հետո վերցրեք լենոլեյումը, հուպ տվեք ներկած կտորի վրա։ Սկզբում փորձեցեք դաջել սպիտակ թղթի վրա, հետո արդեն՝ կտորի։ Ցերը կտորը դաջած կլինեք, թողեք որ ցամաքի և պահեք ժողովածուի համար։

(Առաջադրությունը կատարում է ամբողջ ողակը)։

№ 15 ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

1. Ներկ։
2. Ոսլա։
3. 100 քառ. սանտ. բաժակ։
4. Լենոլեյում՝ նկարը վրան կտրած։
5. Ներկ քսող կտոր։
6. Տակը դնելու շոր։
7. Լվացած սպիտակ միտկալի այն կտորը, որի կեսը ներկված եր։
8. Ներկած միտակալի կտոր։
9. Դումմիաբաբիկում։

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ Ազգային գրադարան
NL0280617

19.139

Անվճար

Бесплатно

Приложение к раздаточному материалу по хлопку

На армянском языке



ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.